ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի 2022 թվականի ընթացքում կատարած աշխատանքների

1. *Քաղաքացիների և դիմեսվարող սուբյեկտների իրավունքների բնագավառ*

2022 թվականի ընթացքում բնակիչներից ստացվել է 3984 դիմում, 62 դիմում՝ դժբախտության մեջ հայտնված ընտանիքներին օգնություն տրամադրելու վերաբերյալ, 2 դիմում՝ չորս և ավել երեխա ունեցող և 151 դիմում՝ անապահով ընտանիքներին օգնություն տրամադրելու, ինչպես նաև 2130 դիմում՝ քաղաքաշինության ոլորտի վերաբերյալ և այլ բնույթի 1639 դիմում:

Ստացվել է 2154 գրություն, որոնք ժամամակին քննարկվել և պատասխանվել են, չի պատասխանվել 5 գրության, դրանք քննարկման փուլում են, տարբեր հարցերով մասնակցել ենք 21 դատական նիստի, վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ կայացվել է 5 որոշում, ընդունվել է համայնքի ղեկավարի 531 որոշում, արձակվել 161 կարգադրություն, կայացել է ավագանու 7 նիստ, ընդունվել՝ 120 որոշում, հրապարակվել է աշխատակազմի քարտուղարի՝ 112 հրաման, տրվել է 812 տեղեկանք՝ ընտանիքի կազմի, բնակավայրի, ազատ ոճի և բնութագրեր:

2. Ֆինասների բնագավառ

1.Փարաքար համայնքի 2022թ. տարվա ընթացքում
հավաքագրված եկամուտների վերաբերյալ հաշվետվությունը

2022թվականին վարչական բյուջեն ընդամենը հավաքագրվել է 1 միլիարդ 21 մլն 924.6 հազ.դրամ գումար, որը կազմում է բյուջեի 94.9 %-ը, 570 մլն 850.0 հազ դրամ սեփական եկամուտի փոխարեն փաստացի հավաքագրվել է 515 մլն 581.686 հազ.դրամ 90.3%-ը, ըստ բնակավայրերի տոկոսային հարաբերությամբ՝ Փարաքար - 80.1 %, Թաիրով - 116.02 %, Մերձավան - 106.2 %, Նորակերտ - 92.5 %, Մուսալեռ - 98.2 %, Բաղրամյան - 96.2 %, Պտղունք - 101.9 %, Այգեկ - 92.86 %, Արևաշատ - 96.9 %:

N		Եկամուտների անվանումը	2022թ. տարեկան բյուջե	Հաշվետու ժամանակաշրջան /1-ին եռամսյակ, 1-ին կիսամյակ, *9 ամիս*, ***տարի***/		
				պլան	փաստացի	կատ %
				հազ. Դրամ		
Խումբ	Ենթա-խումբ					
I		**Վարչական բյուջե ընդամենը**	**1077000.0**	**1077000.0**	**1021924.6**	**94.9**
1		Ընդամենը հարկային եկամուտների	313560.0	313560.0	295758.29	94.3
	1.1	Հողի հարկ	11700.00	11700.00	15566.32	133.0
	1.2	Գույքահարկ շինություններից	27300.00	27300.00	11908.83	43.6
	1.3	Անշարժ գույքի հարկ	96550.00	96550.00	85437.71	88.5
	1.4	Գույքահարկ փոխադրամիջոցներից	178010.00	178010.00	182845.43	102.7

2		**Ընդամենը տեղական տուրքեր այդ թվում**	**25190.00**	**25190.00**	**27900.71**	**110.8**
	2.1	Համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) թույլտվության համար	3000.00	3000.00	6660.25	222.0
	2.2	Օբյեկ-ը վերակառուցելու, ամրացնե-լու,տեսքը փոփոխ.աշխատանքներ	120.00	120.00	35.80	29.8
	2.3	Օբյեկտները քանդելու աշխատանքներ	120.00	120.00	24.90	20.8
	2.1	Համայնքի տարածքում ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի օբյեկտներում՝ ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվության համար	5000.00	5000.00	6535.66	130.7
	2.5	Բացօթյա վաճառք կազմակերպելու	1000.00	1000.00	315.90	31.6
	2.6	գազ և վառելիքաքսայուղային նյութեր	0.00	0.00		0.0
	2.7	Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի՝ առք ու վաճառք իրակ. թույլտվ.համար	460.00	460.00	50.00	10.9
	2.8	Ժամը24-00 ից հետո աշխ.թույլտվության	3490.00	3490.00	2262.50	64.8
	2.9	Համայնքի վարչ. տարածքում, սահմանամերձ բարձրլեռն. համայնք-ի վարչ. տարածքում, բացառ. միջպետ. և հանրապետ. նշանակ. ավտոմոբիլ. ճանապարհ-ի կողեզրում, խանութ-ում և կրպակ-երում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկ. նավթ . գազ-ի վաճառքի թույլտվ. համար	2500.00	2500.00	1806.90	72.3
	2.10	Արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար (1ք.մ*1500)	9500.00	9500.00	10024.10	105.5
	2.11	Այլ տեղական տուրքեր	0.00	0.00	174.80	0.00
	2.12	Համայնքի վարչական տարածքում համայնքային կանոններին համապատասխան հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար	0.00	0.00	9.90	0.00
		3.Պաշտոնական դրամաշնորհ.	506150.00	506150.00	506342.955	100.0
		3.1 Պետ. բյուջեից դոտացիա	501027.8	501027.8	501027.8	100.0
		3.2 Ազգ.նվագարանների գծով սուբվենցիա	5122.250	5122.250	5315.155	**103.77**
3		**Ոչ հարկային եկամուտներ**	**232100.00**	**232100.00**	**191922.69**	**80.06**
	3.1	Օրենքով սահմանված այլ տեղական համայնքի սեփական համարվող	13500.00	13500.00	14758.62	109.3

		վարձակալության վարձավճարներ				
	ա/	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետ.սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ	0.00	0.00	13550.82	0.00
	բ/	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարներ	0.00	0.00	3.70	0.00
	գ/	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատ. իրավունքի դիմաց գանձվող վարձավճար	0.00	0.00	446.05	0.00
	դ/	այլ գույքի վարձակալության վճար	0.00	0.00	758.05	0.0
	3,2	Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից	0.00	0.00	102.70	0.00
		Վարչական գանձումներ	216800.00	216800.00	163812.25	75.6
	3,3	Ինքնակամ կառույցների օրինականացման վճար	99400.00	99400.00	70241.85	70.7
	3,4	Տեղական վճարներ	117400.00	117400.00	93570.40	79.7
	3,5	Վարչական իրավախախտումների պատժամիջոցներից եկամուտներ	1200.00	1200.00	500.00	41.7
	3.6	Այլ ոչ հարկային եկամուտներ	600.00	600.00	12749.12	2124.9

		Ընդամենը վարչ. բյուջե	**1077000.0**	**1077000.0**	**1021924.6**	**94.9**
		Հողի օտարումից մուտքեր	255450.655	255450.655	52087.032	20.4
		Կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ	0	0	937.5	0
		Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)	246714.682	246714.682	170227.244	69.0
		ֆ/բ ազատ մնացորդ	633840.528	633840.528	633840.528	100,0
		Ընդամենը ֆոնդ. բյուջե	**1136005.865**	**1136005.865**	**857092.304**	**73.1**
		Ընդամենը	**2213005.865**	**2213005.865**	**1879016.9**	**84.9**
		Զուտ եկամուտ վարչ. բյուջե	**570850.0**	**570850.0**	**515581.686**	**90.3**

2. Փարաքար համայնքի 2022թ.բյուջեի

ծախսերի կատարման հաշվետվությունը ըստ գործառնական դասակարգման

2022 թվականի ընդամենը բյուջեով կատարվել է ծախսեր 1 միլիարդ 644 մլն 737.9340հազ.դրամ, որը կազմում է ընդամենը բյուջեի 74.3 %-ը: Վարչական մասով ծախսերը կատարվել են 868 մլն 170.199 հազ.դրամ գումարով- 80.6 %-ը, ֆոնդային մասով 776 մլն 567.734 հազ.դրամ գումարով- 68.3 %:

N		Ծախսերը՝ ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման	2022թ. տարեկան բյուջե	Հաշվետու ժամանակաշրջան /1-ին եռամսյակ, 1-ին կիսամյակ, 9 ամիս, ***տարի***/		
Խումբ	Ենթա-խումբ			պլան	փաստացի	կատ %
				հազ. դրամ		
I		**Վարչական բյուջե ընդամենը**	**1077000.0**	**1077000.0**	**868170.199**	**80.6**
1		Տեղական ինքնակառավարում	451845.82	451845.824	296285.8	**65.6**
2		Համայնքային այլ ծառայություն	57616.878	57616.878	45950.211	**79.8**
3		Առողջապահություն	0.0	0.000	0.0	**0.0**
4		Մշակույթի տներ,ակումբներ	17897.1	17897.100	17897.056	**100.0**
5		Սոցիալական ապահովություն	20000.000	20000.000	11836.400	**59.2**
		Հանգիստ,մշակույթ և կրոն	1600.000	1600.000	1043.000	**65.2**
6		Մշակութային ծառայություններ	41802.90	41802.900	41715.00	**99.8**
7		Հանգստի և սպորտի ծառայություններ	1200.00	1200.000	1200.000	**0.0**
8		Նախադպրոցական կրթություն	230000.00	230000.000	222625.00	**96.8**
9		Արտադպրոցական դաստիարակություն	51600.00	51600.000	51489.05	**0.99**
7		**Բնակկոմունալ տնտեսություն**	**202358.877**	**202358.877**	**177051.743**	**87.5**
	7.1	Ճանապարհների վերանորոգում	0.000	0.000	0.000	**0.0**
	7.2	Աղբահանում	168,746.150	168,746.150	155648.011	**92.2**
	7.3	Կեղտաջրերի հեռացում	8,400.000	8400.000	3993.000	**47.5**
	7.4	Կանաչապատում	0.000	0.000	0.000	**0.0**
	7.5	Արտաքին լուսավորում	25,212.727	25212.727	17410.743	**69.1**
8		Գյուղատնտեսություն	898.4	898.421	896.921	0.0
9		Լեռնահանքային արդյունաբերություն	0.0	0.000	0.0	0.0
10		Տրանսպորտ, ճան. տնտ. և կապ.	180.0	180.000	180.0	100

II		**Ֆոնդային բյուջե**	**1136656.663**	**1136656.663**	**776567.734**	**68.3**
	1	Շենքերի և շինությունների շինարարություն	789383.528	789383.528	602947.092	**76.3**
	2	Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	183621.337	183621.337	71420.780	**38.9**
	3	Վարչական սարքավորումների ձեռք բերման ծախսեր	12730.0	12730.0	2409.862	**18.3**
	4	Այլ ակտիվների ձեռք բերման ծախսեր	270.0	270.0	270,0	**100,0**
	5	Տրանսպորտային սարքավորումներ	0.0	0.0	0.0	**0**
	6	Նախագծահետազոտական ծախսեր	150000.000	150000,0	99520.0	**66.4**
I+II		**Ընդամենը ծախսեր**	**2213004.865**	**2213004.865**	**1644737.934**	**74.3**

Փարաքար համայնքի 2022թ. ընթացքում կատարված ծախսերի վերաբերյալ հաշվետվությունը ըստ տնտեսագիտական դասակարգման

2022 թվականի վարչական բյուջեով կատարվել են ծախսեր՝

-Աշխատողների աշխատավարձեր և այլ վարձատրություններ՝ 335 մլն 817.668 հազ. դրամ,

-Էներգետիկ, կապի, կոմունալ և ապահովագրական ծառայություններ՝ 97 մլն 496.243 հազ դրամ

-Ներքին և արտաքին գործուղումներ 3 մլն 582.341 հազ դրամ

-Պայմանագրային և այլ ծառայությունների ձեռք բերման գծով՝ 13 մլն 590.526 հազ դրամ

-Մասնագիտական ծառայությունների գծով՝ 5 մլն 600.126 հազ դրամ

-Շենքերի և շինությունների, մեքենաների և սարքավորումների պահպանման գծով՝ 2 մլն 371.740 հազ դրամ

- Գրասենյակային, տրանսպորտային, հատուկ նպատակային այլ նյութերի ձեռք բերման գծով ծախսեր 34 մլն 540.685 հազ դրամ

- Սուբվենցիաներ ՀՈԱԿ-ներին - 327 մլն 866.925 հազ դրամ

-Ընթացիկ դրամաշնորհներ -5 մլն 102.1 հազ դրամ

-Այլ կապիտալ դրամաշնորհներ գծով ծախսեր - 25 մլն 853.850 հազ դրամ

-Այլ նպաստներ բյուջեից՝ սոցիալական օգնության գծով ծախսեր - 11 մլն 836.4 հազ դրամ

-Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին. -3 մլն 542.8 հազ դրամ

-Պարտադիր վճարներ -968.795 հազ դրամ:

Ֆոնդային բյուջեի ծախսային մասում համայնքապետարանը ուշադրությունը կենտրոնացրել է համայնքի փողոցների ասֆալտապատման, տուֆով սալարկման, խաղահրապարակների կառուցման, գազաֆիկացման աշխատանքներին, որոնց համար

կատարվել է կապիտալ ծախսեր 776 մլն 567.734 հազ դրամ, որից՝ պետության կողմից կապիտալ սուբվենցիա - 235մլն 891.473հազ դրամ

Փարաքար, Բաղրամյան, Այգեկ բնակավայրերում ասֆալտապատում - 234 մլն 880.0 հազ դրամ,

Փարաքար համայնքի Բաղրամյան բնակավայրի Կոմիտաս փողոցի մի հատվածի տուֆով սալարկում - 17 մլն 003.105 հազ դրամ,

Փարաքար համայնքի Բաղրամյան, Այգեկ, Նորակերտ, Արևաշատ, Մուսալեռ, Մերձավան, Պտղունք, Փարաքար բնակավայրերում խաղահրապարակների կառուցում և գոյություն ունեցող խաղահրապարակների վերանորոգում և վերազինում ծրագրի իրականացման համար կատարվել է ծախս 5մլն դրամ նախագծանախահաշվային փաստաթղթերի և 450.0 հազ դրամ փորձաքննության համար: Աշխատանքները ավարտին է հասել Նորակերտ բնակավայրում, որի համար ծախսվել է 10մլն 291.078հազ դրամ: Մուսալեռ, Պտղունք և Փարաքար բնակավայրերում դեռ շարունակվում են, որոնց համար ծախսը կազմում է 22 մլն 81.120 հազ դրամ: Բաղրամյան, Այգեկ, Արևաշատ, Մերձավան բնակավայրերում խաղահրապարակների կառուցումը կիականանա 2023թվականին:

Փարաքար համայնքի Բաղրամյան, Պտղունք, Մուսալեռ, Մերձավան, Այգեկ և Փարաքար բնակավայրերի փողոցների գազաֆիկացում - 132 մլն 652.950 հազ դրամ,

2021 թվականի ՀՀ Կառավարության կողմից հաստատված անավարտ սուբվենցիոն ծրագրերից ավարտին է հասել.

Փարաքար բնակավայրի Վազգեն Սարգսյան թաղամասի կոյուղագծի կառուցման և Էրեբունի փողոցի կոյուղագծի վերանորոգման աշխատանքները /1420 գծմ երկարությամբ/ 98 մլն 346.384 դրամ:

Արևաշատ բնակավայրի մանկապարտեզի կառուցման կապալային աշխատանքներ- 52 մլն 862.542 հազ.դրամ:

Բաղրամյան բնակավայրի խմելու ջրամատակարարման բաշխիչ ցանցի 11000գծ.մ ջրագիծի , 3700գծ.մ տների միացում վերանորոգման ծրագրի պետության մասնաբաժինը - 46 մլն 485 000 դրամ:

Բաղրամյան բնակավայրի բուժամբուլատորիայի շենքի տանիքի վերանորոգում , պատուհանների փոխարինում, կապիտալ ներքին հարդարում, էլեկտրական լարերի հիմնովին մոնտաժ, կոյուղու կառուցում, ջրամատակարարում և վերանորոգում ծրագրի աշխատանքների պետության մասնաբաժինը - 8 մլն 475.0 հազ դրամ:

Փարաքար բնակավայրի Ի.Գասպարյան, Մեքենագործներ և Վ Մամիկոնյան փողոցների ասֆալտապատման նախորդ տարվա պարտք -13 մլն 691 .0 հազ դրամ :

Կապիտալ ծախսեր է կատարվել՝

Արևաշատ բնակավայրի Երևանյան խճուղի թիվ 61 մանկապարտեզի գազատարի գազաֆիկացման նախագծանախահաշվային փաստաթղթերի համար - 250.0 հազ դրամ, և կոյուղահորի կառուցման և տարածքի բարեկարգման նախագծանախահաշվային փաստաթղթերի համար 500.0 հազ.դրամ:

Բաղրամյան բնակավայրի ոռոգման ջրագծի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի համար 250.0 հազ.դրամ:

Մերձավան բնակավայրի Երևանյան խճուղու 2-րդ փողոցի և 2-րդ փողոցի 1-ին փակուղու կոյուղագծի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման համար 1 մլն 200.0 հազ դրամ, կառուցման համար-11 մլն 957.719 հազ.դրամ:

Նորակերտ բնակավայրի Կոմիտաս փողոցի մայթի տուֆով կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում 360.0 հազ դրամ, կառուցում -16 մլն 942.732 հազ դրամ:

Պտղունք բնակավայրի վարչական շենքի տանիքի վերանորոգման աշխատանքներ - 4 մլն դրամ:

Բաղրամյան բնակավայրի բուժամբուլատորիայի և մշակույթի տան ջեռուցման համակարգի անցկացման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում -220.0 հազ դրամ:

Փարաքար բնակավայրի Անդրանիկի փողոցում գազատարի կառուցման և շինհավաքագրման աշխատանքներ - 967.862 հազ դրամ և Բաղրամյան փողոցում ասֆալտբետոնե ծածկի փոսային վերանորոգում -996.0հազ դրամ:

Մուսալեռ բնակավայրում ոռոգման ցանցի ընդլայնման և վերանորոգման համար ձեռք է բերվել 26 հատ երկաթբետոնե կիսախողովակ և տեղադրվել ցեմենտ ավազե շաղախով 4 մլն 666.200հազ դրամ:

Այգեկ բնակավայրի սելավատար ջրահեռացման կամուրջի մասնակի վերանորոգում - 953.104 հազ դրամ:

Փարաքար համայնքի 9 բնակավայրերում անբարեկարգ փողոցներում փոսալցման աշխատանքներ, էքսկավատորի ծառայություններ և գլդոնում - 5 մլն 720.0 հազ դրամ:

Վարչական սարքավորումներ և աճող ակտիվներ ձեռք բերման գծով կատարվել է ծախս 2 մլն 679.862 հազ դրամ

Փարաքար համայնքի 2023 թվականի սուբվենցիոն ծրագրերի իրականացման համար փոխանցվել է նախագծանախահաշվային փաստաթղթեր և փորձաքննություն - 82 մլն 910.0 հազ դրամ, դրանք են՝

1. Փարաքար համայնքի Այգեկ, Փարաքար, Թաիրով, Արևաշատ, Մերձավան, Պտղունք, Մուսալեռ, Նորակերտ բնակավայրերի մանկապարտեզների վերանորոգման և բակային տարածքների բարեկարգման ծրագիր /համայնք-պետություն 30/70 տոկոսային հարաբերակցությամբ/

2 .Փարաքար համայնքի Այգեկ , Նորակերտ, Արևաշատ , Մուսալեռ, Մերձավան, Պտղունք, Թաիրով, Փարաքար և Բաղրամյան բնակավայրերի փողոցների ասֆալտապատման ծրագիր /համայնք-պետություն 65/35 տոկոսային հարաբերակցությամբ/

3. Փարաքար համայնքի Փարաքար բնակավայրի Է. Թևոսյան և Ռաֆֆու փողոցների կոյուղագծի կառուցում ծրագրի /համայնք-պետություն 40/60 տոկոսային հարաբերակցությամբ/

4. Փարաքար համայնքի Մուսալեռ, Մերձավան, Փարաքար, Այգեկ, Բաղրամյան, Նորակերտ բնակավայրերի բազմաբնակարան շենքերի վերանորոգում և Մուսալեռ, Պտղունք, Մերձավան, Փարաքար, Նորակերտ բնակավայրերի բուժամբուլատորիաների, Փարաքար բնակավայրի կենցաղի տան վերանորոգում /համայնք-պետություն 65/35 տոկոսային հարաբերակցությամբ/:

3.Քաղաքաշինության, հողաշինության և գյուղատնտեսության բնագավառ

- Կազմվել է 283 նախագծման թույլտվություն,
- Համաձայնեցվել է 271 նախագիծ,
- Տրվել է 278 շինարարության թույլտվություն,
- Տրվել է ավարտված շինարարության շահագործման փաստագրման 70 ակտ,
- Կայացվել է հողի գործառնական նշանակության փոփոխության 24 որոշում,
- Կայացվել է հողի նպատակային նշանակության փոփոխության 8 որոշում,
- Կայացվել է գույքային իրավունքի վերականգնման 28 որոշում,
- Կայացվել է ինքնակամ շինությունների օրինականացման 187որոշում,
- Կասեցվել է 5 ինքնակամ շինարարություն,
- Պարբերաբար տեղեկատվություն է ներկայացվել Արմավիրի մարզպետարան, Քաղաքաշինության նախարարություն, Քաղաքաշինական պետական տեսչություն, վիճակագրական վարչություն և այլ պետական կառույցներ,
- Կազմվել և հաստատվել է 309 հողամասի հատակագիծ,
- Կատարվել է 791 հասցեների ճշտման և նոր հասցեների տրամադրման աշխատանքներ,
- Կազմվել է 6 քանդման թույլտվություն,
- Կազմվել է 50 շինարարության թույլտվության ժամկետի երկարաձգում,
- Կազմվել է քարտեզի ուղղման 100 գրություն,
- Կազմվել է թվով զարգացող թաղամասի վերաբերյալ 29 տեղեկանք,
- Կազմվել է ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում ներառված չլինելու վերաբերյալ 10 տեղեկանք:
- Փարաքար համայնքի չորս բնակավայրերում՝ Փարաքար, Մերձավան, Մուսալեռ,Պտղունք ամբողջովին փոխվել են հին, վատ վիճակում գտնվող 375 մ երկարությամբ երկաթբետոնյա ջրագծերը:
- Համատեղ «Էջմիածին» ՋՕԸ-ի հետ իրականացվել է ջրանցքների մաքրման և ջրագծերի մասնակի վերանորոգման աշխատանքներ, պարբերաբար հանդիպել, արձագանքել ենք համայնքի բնակիչների բողոքներին և խնդրանքներին:
- «Գլոբալ ինժեներ» ՍՊԸ-ի հետ կատարվել են համայնքի ինը բնակավայրերում նախատեսվող (յուրաքանչյուր բնակավայրում 2 կմ) ոռոգման համակարգի հին (մաշված) ջրատարները նորով փոխարինման, ուսումնասիրման և չափագրման աշխատանքները:
- Իրականացվել է Փարաքար համայնքի 2 բնակավայրերում (Բաղրամյան,Նորակերտ) գտնվող, չորս հակակարկտային « Զենիթ » տիպի կայանների անխափան աշխատանքները ապահովող միջոցառումներ:
- Փարաքար համայնքում կազմակերպվել և իրականացվել են կանաչապատ տարածքների պահպանման և ավելացման աշխատանքներ:
- Իրականացվել են գյուղատնտեսական մշակաբույսերի համախառն բերքի հաշվառման աշխատանքները, որի մասին, անընդմեջ հաշվետվություն է ներկայացվել վիճակագրական կոմիտեին և ՀՀ Արմավիրի մարզպետարանին:
- Կազմակերպվել և իրականացվել է Փարաքար համայնքի բնակիչների հավաքագրած բերքը ընդունող կազմակերպություններին հանձնելու գործընթացը:
- Համայնքի հողօգտագործողների պահանջարկի հիման վրա, նրանց է տրամադրվել՝ ազոտական և ֆոսֆորական պարարտանյութ:

- Փարաքար համայնքում առկա 5 հա մակերեսով կանաչապատ տարածքների (զբոսայգիներ, դպրոցների, մանկապարտեզների հարակից տարածքներ և այլն) պահպանման, մակաբույծերի (լվիճ) դեմ կանխարգելիչ միջոցառումներ իրականացնելու նպատակով, ձեռք է բերվել՝ «Բ-58» տեսակի 3,5 լիտր, «ԳԼԻՖՈՍ» տեսակի 3կգ թունաքիմիկատ և ըստ պահանջարկի (մակերեսի) տրամադրվել բնակավայրերին:

4.Առևտրի և սպասարկման բնագավառ

- Համաձայն առևտրի, հասարակական սննդի սպասարկման ոլորտի գործունեության կանոնոնների իրականացվում է այդ ոլորտի գործունեությունը,
- Տրամադրվել է 84 թույլտվություն համայնքի տարածքում ոգելից խմիչքիների, ծխախոտի արտադրանքի վաճառքի,
- Տրամադրվել է 3 թույլտվություն բացօթյա վաճառք կազմակերպելու համար,
- Տրամադրվել է 10 թույլտվություն ժամը 24 ^{00}-ից հետո աշխատելու համար,
- Տրամադրվել է 34 թույլտվություն հանրային սննդի կազմակերպման համար:

5.Սոցիալական առաջկցության և առողջապահության բնագավառտ

Հաշվետու տարում համայնքի թվով 151 անապահով ընտանիք ստացել է ֆինանսական աջակցություն, 2 անապահով ընտանիքի ուսանողի ուսման վարձավճարի փոխհատուցում: Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երկու երեխա՝ հետևողական աշխատանքի շնորհիվ վերադարձվել են ընտանիք և հետևել՝ նրանց դպրոց հաճախելուն:
Կազմակերպվել է 4 անապահով ընտանիքի կանանց ընդգրկումը Մանկական զարգացման հիմնադրամի կողմից կազմակերպվող մասնագիտական դասընթացներին, որի ավարտին նրանց կտրամադրվեն համապատասխան մասնագիտական գործիքներ.
Անցկացվել են խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 15 նիստ:
Պատերազմի ընթացքում համայնքի զոհված և վիրավորում ստացած երեք ընտանիք ընդգրկվել են բնակարանային պայմանների բարելավման ծրագրում:
2022 թվականի սեպտեմբերի 13-ի ադրբեջանական ագրեսիայի ընթացքում 1 զոհվածի և 6 վիրավորների ընտանիքի տրվել է դրամական աջակցություն:
Անապահով ընտանիքների երեխաները մասնակցել են մի շարք ամանորյա միջոցառումների, ստացել նվերներ:

6. Բժշկական ամբուլատորիաներ

Փարաքար համայնքի 9 բնակավայրերի բնակիչներ սպասարկվում են 6 բուժ.ամբուլատորիաներում:
2022թ. ամբուլատորիաներում հաշվառված է 21868 բնակիչ, 0-18 տարեկան՝ 5480 երեխա, 18 տարեկան և բարձր տարիքի՝ 16388 բնակիչ: Ամբուլատորիայի ֆինանսավորումը կատարվում է ՀՀ առողջապահության պետական գործակալության կողմից, որը 2022 թվականին կազմել է 142.243.154 դրամ: Ամբուլատորիայում հաշվառված են 611 հաշմանդամության խումբ ունեցող անձիք, Արցախյան պատերազմի և Չեռնոբիլի 106 մասնակից: 2022 թվականին ամբուլատորիաներ կատարվել է 38846 այց, 1797 տնային այց, ստացիոնար է ուղեգրվել 1888 հիվանդ: Արձանագրվել է 136 մահ: Ամբուլատորիայում կատարվել է 788 ԷՍԳ (էլեկտրասրտագրություն), 2881 գլյուկոմետրիա: 2022թ. ըստ

բժշկական ցուցումների բնակիչներին տրամադրվել են ուղեգրեր նեղ մասնագիտական խորհրդատվության և լաբորատոր գործիքային հետազոտությունների համար: 2022 թվականին անվճար և արտոնյալ պայմաններով բնակչությանը տրամադրվել է 7.823.421 դրամի դեղորայք:

Բուժ.ամբուլատորիաներում 2022 թվականին սպասարկվել է 101 հղի: Ծնված երեխաների թիվը՝ 274: Ամբուլատորիայում կատարվել է 9985 պրոֆ. պատվաստում:
«Հիվանդությունների վերահսկում և կանխարգելում» պետ պատվերի շրջանակներում կատարվել է 993 գլյուկոմետրիա (գլյուկոզայի որոշումը արյան մեջ) և 278 PAP քսուկի հետազոտություն:

7.Պաշտպանության բնագավառ

Համայնքի պահեստազորայինները ծանուցումներով տեղեկացվել են եռամսյա վարժական հավաքների վայրի, ներկայանալու ժամանակի վերբերյալ, կատարվել է զինվորական հաշվառման տվյալների ճշտում:
Կատարվել է աղետների և ռիսկերի կառավարման համայնքների պլանների մշակման աշխատանքները:
2022 թվականի ընթացքում հայկական բանակ զորակոչվող պատանիները տեղեկացվել են մարզային տարածքային ստորաբաժանումում բժշկական զննում անցնելու մասին:
Ճշգրտվել և տարածքային ստորաբաժանում է ներկայացվել Փարաքար համայնքում առկա, անկախ տեխնիկական վիճակից, բոլոր տեսակի տրանսպորտային միջոցների, վառելիքի քանակի, մետաղյա տարաների և լիցքավորման կայանների վերաբերյալ տվյալները:
Կատարվել է Փարաքար համայնքի քաղաքացիական պաշտպանության պլանի լրամշակման աշխատանքները և կազմվել համայնքի քաղաքացիական պաշտպանության պլանը:
Ճշգրտվել են Փարաքար համայնքի զորահավաքային ռեսուրսների իրական թվաքանակի և որակական վիճակի մասին տվյալները:
Կազմվել է համայնքում հաշվառված 2007 թվականին ծնված պատանիների անվանացանկը և ներկայացվել Արմավիրի մարզի տարածքային ստորաբաժանում:

8.Մշակույթի, սպորտի և արվեստի բնագավառ

Փարաքար համայնքում 2022թ-ին գործել է 4 մշակույթի տուն, 6 գրադարան: Ընդհանուր աշխատողների թիվը եղել է 16:

Գործել է՝ շախմատի, պարի, նկարչության, զարգացման խմբակներ:

«Փարաքարի մշակույթի և երիտասարդության պալատ» ՀՈԱԿ-ում իրականացվել են 10 մշակութային և 12 սպորտային միջոցառում:

Ծաղկաձորում կազմակերպվել է «Մշակութային խճանկար» փառատոնը, որին մասնակցել են Թաիրովի և Փարաքարի մշակույթի տների պարի խմբակները:

Փարաքարի «Մշակույթ և սպորտ» ՀՈԱԿ- ում տեղի է ունեցել «Իմ մտքի թռիչք» խորագիրը կրող ամենամյա մրցույթը, որին մասնակցել են Փարաքար խոշորացված համայնքի բոլոր մշակույթի տների նկարչության խմբակների աշակերտները:

6-ից 15 տարեկան երեխաների համար գործել է Փարաքարի ամառային ճամբարը:

«Փարաքարի Մշակույթ և երիտասարդության պալատ» ՀՈԱԿ-ում անցկացվել է պրոֆեսորներ Սամվել Սևադայի և Ռուբեն Երզնկյանի գլխավորությամբ ֆոտոնկարների ցուցադրություն:

22-28.12.2022թ.- Փարաքարի Մշակույթ և երիտասարդության պալատ ՀՈԱԿ-ի բոլոր մշակույթի տներում տեղի է ունեցել ցերեկույթներ նվիրված Ամանորին:

«Հովիկ Էդգարյանի անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ

Աշակերտների թիվը 01.05.2022թ. – 165
Աշակերտների թիվը 23.01.2023թ. – 224
Աշխատողների թիվը 01.05.2022թ. – 31
Աշխատողների թիվը 23.01.2023թ. – 39

01.10.2022թ. բացվել է երգչախումբ, երեխաների թիվը – 30:
01.11.2022թ. բացվել է թավջութակի դասարան:

Շինարարական աշխատանքներ

20.04.2022թ-ին կատարվել է ջրագծերի վերանորոգում, բացվել են մինչ այդ չգործող 2 սանհանգույցները և ամբողջ շենքը ապահովվել է մշտական տաք և սառը ջրով:
01.05.2022թ. ձեռք է բերվել 2 պահարան՝ խեցեգործության գեղեցիկ աշխատանքները ցուցադրելու համար:
01.08.2022թ. վերանորոգվել է մեծ համերգային դահլիճը, սոլֆեջիոյի, պարի, դհոլի դասարանները և միջանցքները:
20.08.2022թ. ներկվել են դպրոցի պատուհանների և դռների ճաղավանդակները:
Դպրոցի 8 պատուհանների կոտրված ապակիները փոխարինվել են նոր ապակիներով:
01.09.2022թ. համերգային դահլիճի համար գնվել են վարագույրներ:
01.11.2022թ. գնվել է համակարգիչ:
01.07.2022թ. – 01.01.2023թ. դասարաններում բոլոր վառված լույսերը փոխարինվել են լեդ լամպերով:
10.11.2022թ. վթարային վիճակում գտնված հոսանքագիծը փողարինվել է եռաֆազ լարով:
Լուսավորության լամպ է տեղադրվել դրսի մուտքի սյան վրա, ինչը ապահովել է լույսով ամբողջ տարածքը:
Դպրոցը ջեռուցվում էր մասնակի: 01.10.2022թ.-ին ամբողջ դպրոցի տարածքը ապահովվել է ջեռուցումով:
Մեծ դահլիճում տեղադրվել է հովացման և ջեռուցման համակարգ:
Դպրոցը նվեր է ստացել դաշնամուր- 4 հատ (Լիրիկա, Սևան, Ռոստով Դոն և Շոլց):

Համերգներ

01.05.2022թ.-10.05.2022թ. դասարանական համերգներ:
Ժող. գործիքների համույթի 10 ամյակի շրջանակներում համերգներ տարբեր վայրերում՝
27.05.2022թ. «Փարաքարի Հովիկ Էդգարյանի անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ում, Գյումրի «Իգիթյանի անվան կենտրոն»-ում:
20.06.2022թ. դպրոցի հաշվետու համերգ:
04.09.2022թ. Դիլիջան մշակույթի կենտրոն:
«Քո արվեստը դպրոցում» խորագրով համերգային ծրագրի շրջանակներում նկարահանվել է ֆիլմ Փարաքար խոշորացված համայնքի 9-ը դպրոցների աշակերտների և ուսուցիչների

մասնակցությամբ՝ հյուրն էր Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի դաշնամուրային ֆակուլտետի պրոֆեսոր Սերգեյ Քեչեկը:
02.12.2022թ. «Արաբկիր հայորդաց տուն» ժող.գործիքների համերգ:
24.12.2022թ. տեղի ունեցավ դպրոցի տարեվերջյան համերգը «Ամանորյա ծրագրով», վերջում երեխաներին հյուր էր եկել Ծաղրածուն,ով ավելի հետաքրքիր դարձրեց երեխաների օրը:
Դհոլահարները ակտիվ մասնակցություն են ունեցել տարբեր միջոցառումների՝
04.12.2022թ. ելույթ են ունեցել Գաբրիել Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում:
25.12.2022թ. մասնակցել են Սոս Սարգսյանի անվան Համազգային թատրոնում կայանալիք համերգային ծրագրին և ստացել պատվոգրեր:
26.12.2022թ. Արաբկիր հայորդաց տուն «Ամանորյա համերգ»:

9.Փարաքար համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություններ

Փարաքար համայնքում 2022 թ-ին գործել է 7 մանկապարտեզ: Ընդհանուր աշխատողների թիվը եղել է 135, մանկապարտեզ է հաճախել ընդհանուր թվով 603 երեխա, գործող խմբերի քանակը՝ 22:

05.12.2022թ-ին վերաբացվել է Բաղրամյանի մանկապարտեզ ՀՈԱԿ-ը, որտեղ սկսել են աշխատել 21 աշխատող, և հաճախել 71 երեխա, խմբերի քնակը՝ 3 :

Նախադպրոցական ուսումնական հաստատությունների աշխատանքներում հատուկ տեղ է հատկացվել ազգային-հոգևոր և ժողովրդական տոներին, որոնք կազմակերպվել են ազգային խորհրդով ու բովանդակությամբ: Կարևորվել են նաև զանազան գրավիչ ժամանցներ, մարզական զվարճություններ:

2022թին կազմակերպվել և անցկացվել են միջոցառումներ նվիրված Հայկական բանակի օրվան, Տեառնընդառաջ տոնին, Գարնանը, Զատկի տոնին, Մայրիկին, Մայիսյան հաղթանակներին, Երեխաների պաշտպանության միջազգային օրվան, Գիտելիքի օրվան, Աշնանը, Ամանորին, ընդհանուր թվով՝ 56 միջոցառում;

Բացի վերոնշյալ միջոցառումներից պարբերաբար կազմակերպվել և անցկացվել են օրինակելի պարապմունքներ, թեմատիկ ստուգումներ տարբեր մեթոդիկաներից, իրականացվել երեխաների գիտելիքների կարողությունների և հմտությունների զարգացման մակարդակի ուսումնասիրում և վերլուծում: Պարապմունքների մասնակից են եղել նաև ծնողները, ընդհանուր թվով 68 օրնակելի պարապմունք:

Պարապմունքների բաշխումը կատարվել է համաձայն կրթական համալիր ծրագրերի: Վերահսկվել է օրվա ռեժիմի, պարապմունքների ճիշտ պլանավորումն ու անցկացումը՝ տարիքային բոլոր խմբերում:

Բացի նշված օրինակելի պարապմունքներից անցկացվել են պարապմունքներ բնության հետ անմիջական շփման միջոցով, կազմակերպվել կարճատև զբոսանքներ, ճանաչողական այցեր տեսարժան վայրեր, արշավներ՝ երեխաների մոտ բնության հանդեպ սեր ձևավորելու և զարգացնելու նպատակով, ընդհանուր թվով 45:

Կազմակերպվել են տիկնիկային ներկայացումներ, ընդհանուր թվով 18 ներկայացում:

Կարևորելով մանկավարժական համակազմի որակական բարելավումը՝ ուսումնական հաստատություններում իրականացվել են մանկավարժական կադրերի հետ խորհրդատվություններ, անցկացվել մեթոդժամեր, ընդհանուր թվով 28 մանկավարժական խորհրդի նիստեր՝ կայացվել համապատասխան որոշումներ:

2022թ.-ի դեկտեմբերի 05-ից դեկտեմբերի 25-ը աշխատակիցների մի մասը մասնակցել է «Նախադպրոցական ուսումնական հաստատության՝ մանկավարժական աշխատողների համար իրականացվող վերապատրաստման դասընթացին» և ստացել համապատասխան վկայական:

Պարբերաբար ձևավորվել և նորացվել են բնության անկյունները, խմբասենյակները, միջանցքները, բակերը: Պատրաստվել են դիտողական և տեղեկատվական նոր նյութեր:

Կազմակերպվել են անհատական զրույցներ, խորհրդատվություններ նոր ընդունված երեխաների ծնողների հետ, անցկացվել ծնողական ժողովներ, ծնողական խորհրդի նիստեր՝ ընդհանուր 88 ծնողական ժողով: